

## ԳԼՈՒԽ ԺԶ

Անհանգիստ գիշեր մ'եր այդ գիշերը Գրիգորի համար, ոչ գետնախշտի լինելուն այլ իւր խղճմտանքին ձայնը չէր թող տար քուն լինիլ: Ելաւ անշշունջ գնաց շատրուանին քով նստաւ, Դամասկոսի վճիտ եւ աստղազարդ երկնից աչքերը բարձրացուցած կը մտածեր իւր բախտին վրայ. կը յիշեր հայրենի պալատը՝ մանաւանդ իւր սքանչելի մայրը՝ որ չէր գիտեր ազատէ՞ր էր՝ կամ կատաղի բոցերու ճարա՞կ եղեր էր: Կը յիշեր եւ Ռշտունեաց Ոստանը եւ հոնտեղի իր ութնօրեայ սիրալիր կենակցութիւնը Օրիորդին հետ եւ վերջին գիշերը, ուր յայտնէր էին միմեանց իրենց արտին սերը: Կուզեր աստուծոյ բարձրացնել իւր աչքերը՝ ի վեր քան գայդ երկնից գեղեցիկ կամարը, բայց խղճմտանքը իբր վարագոյր համարձակութիւն չէր տար իւր մաղթանաց այդ դատաւորին դիմելու, որու աչքերն ամէն յանցանք ամէն ոճիր կը տեսնեն:

Կը մտածեր թէ այս ուրացութեամբ, որ աղօթել չէր համարձակէր աստուծոյ, որ ամէն գաղտնիք գիտեր, ինչպէ՞ս պիտի երեւար մարդկանց, ինչ պիտի զրուցեր իր առաքինի մօրը, եթէ ողջ էր, իսկ եթէ մեռած էր ի՞նչ աչքով կը նայեր երկնքէն իւր ուրացեալ զակին վրայ. նոյն Ռշտունեաց Օրիորդն ինչպէ՞ս պիտի ընդունէր ուրացողը, եւ փոխանակ սիրոյ, ի՞նչ արհամարհանք՝ ի՞նչ զգուանք պիտի զգար իւր վրայ: «Ո՛հ իմ սիրելի շղթայներս,— կ'ըսէր, խեղճ երիտասարդը,— դուք հազար անգամ սիրելի էիք ինձ, վասնզի ոտիցս վրայ կը զգայի բեռ եւ սրտիս վրայ ծանրութիւն չի կար. հիմա շունչ քաշել նաեւ ծանր է ինձի: Մայրս՝ եթէ ողջ է՝ իբր անառակ որդի ընդունի զիս, բայց Թենի՝ ո՛հ, Թենի ի՞նչ նայուածք պիտի ձգէ վրաս, արդէն այս երկար գերութեամբս թերեւս զիս մոռցած գրեթէ՝ հիմա ուրացութեամբ նաեւ աղտեղեալ ի՞նչ տեսակ անարգ ու զգուելի եակ պիտի երեւամ իրեն: Ես որ երբեմն կ'երագէի, քունխս մէջ կը տեսնէի իւր գեղեցիկ աչքերը, իւր կարապի պարանոցը. այլեւս չի կայ ինձ համար այդ մխիթարութիւնը: «Ուրացողը՛, ուրացողը՛», պիտի ըսեն ետեւես, եւ մեր ծառաներն անգամ: Զապա Ատուեն ի՞նչ պիտի զրուցէ. խեղճ մարդը, որ այնչափ զիս կը սիրէր, որուն վրայ մայրս այնչափ վստահութիւն ուներ, եւ ամէն անգամ աչքէն հեռանալուս զիս իրեն աւելի կը յանձներ քան թէ իւր եղբօր Սուրենին, եւ որ զիս ազատելու համար կրակի մէջ իր անձը կը նետէր... ցաւոց առարկայ՝ զգուելի եակ ամէն աչաց պիտի երեւամ, եւ այսպիսի կեանք վարելու համար պիտի ապրեմ աշխարհիս վրայ»:

Այս խորհրդածութեանց մէջն էր Գրիգոր, երբ դիմացի կանանոցի դուռը կամաց եւ զգուշութեամբ ճռնչեց եւ նեղ մը բացուեցաւ: Զայ երիտասարդը մտածեց